

## ՏԻՊ ՈՒ ՏԱՌ

ՅՈՒՆԵՍԿՈՒՆԱԿԱՆ այս օրերուն մէջ, մտաւորական դասակարգը մանաւանդ, իր մտքի մեծուփոքր արտադրութիւններով մասնակից եղաւ Մեծ Տօնին: Հրատարակուած բոլոր երկասիրութիւնները կանխողն էր Թէոդիկ, որ տարիներու տքնութեան արդիւնք իր ստուար գործը՝ ՏԻՊ ՈՒ ՏԱՌ քանի մը ամիս յառաջագոյն լոյս ընծայեց Տէր-Ներսէսեան ամենաչքեղ տպագրութեամբ, որ արդարեւ պատիւ կը բերէ հրատարակիչներուն և յարգանք մըն է Սահակ-Մեսրոպի հայ առաջին տպագրիչ Մէղապարտ Յակոբի և իր բազմաշխատ յաջորդներուն յիշատակին: Այս գործը որ լիակատար պատմութիւնն է Հայ Տառերու գիւտին, մեր ձեռագիրի տառերուն և հայ տպարանական աշխարհը բոլորած չորեքդարեան գործունէութեան, կ'արժէ որ ամէն Հայ անհատունենայ, իր գրագարանին մէջ, ծանօթանալու համար մտքի մշակութեան գործին աշխատաւորներու կեանքին: «ՏԻՊ ՈՒ ՏԱՌ»-ի կեդրոնատեղին է, Տէր-Ներսէսեան թղթափաճառատուն. գին 30 դր., փառակազմ 45., գաւառ 35-50: